ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

«18» ՀՈՒԼԻՍԻ 2025 ԹՎԱԿԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Ղուլունցը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարող՝ Աստղիկ Ղարագյոզյանը

Նիստին մասնակցում էին Տեղ համայնքի ավագանու թվով 10 (տասը) անդամներ՝

1. Առաքելյան Վահե
2. Բաղդասարյան Նազիկ
3. Գալստյան Լարիսա
4. Դալլաքյան Արման
5. Ձեյնալյան Մասիս
6. Ղուլունց Դավիթ
7. Ղուկասյան Արագած
8. Միրզոյան Արամ
9. Շեգունց Ռոմիկ
10. Սիմոնյան Լորա

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 18-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 65-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի (այսուհետ՝ Համայնք) առաջարկությունը, Տեղ համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2025 թվականի հուլիսի 18-ի արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2025 թվականի բյուջեի կատարման երկրորդ եռամսյակի ընթացքի մասին.

2.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին.

3.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով գումար հատկացնելու մասին:

Քվեարկեցին

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՍՏՂԻԿ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթներով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ կետով, Տեղ համայնքի ավագանին ***որոշում է.***

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի հաղորդումը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի բյուջեի 2025 թվականի կատարման երկրորդ եռամսյակի ընթացքի մասին՝ համաձայն բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության 1-5 հատվածների:

Քվեարկեցին

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՍՏՂԻԿ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 27.1-ին հոդվածով, հիմք ընդունելով համայնքի հնգամյա զարգացման ծրագիրն և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Տեղ համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայքնի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկեցին

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ)

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը, 11-րդ հոդվածը, 13-րդ հոդվածի 10-րդ մասը, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Տեղ համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Տեղ համայնքում սկսել 2025թ-ի մասնակցային բյուջետավորման գործընթաց:

2.Տեղ համայնքի 2025թ-ին բյուջեում հատկացնել 20000,0 հազ. ՀՀ դրամ գումար՝ 2025թ-ի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով:

3. Յուրաքանչյուր առաջարկ-նախագծի իրականացման համար սահմանել առավելագույն սահմանաչափ՝ 20000,0 հազ. ՀՀ դրամ:

4. Սահմանել մասնակցային բյուջետավորման առաջարկների նախնական գնահատման աղյուսակի ձևաթուղթը՝ համաձայն հավելվածի:

5. Սահմանել, որ քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների առնվազն մեկ տոկոսի կողմ ձայների դեպքում առաջարկ-նախագիծը համարվում է հաղթած:

6. Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման համար սահմանել ենթակառուցվածքների զարգացման ոլորտը՝ որպես առաջնահերթություն:

7. Համայնքի ղեկավարին՝

1) սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2025թ-ի ՄԺԾԾ-ում, տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում:

2) համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկը(ները) ներկայացնել ավագանուն:

3) իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Քվեարկեցին

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Օրակարգի բոլոր հարցերը սպառվեցին: Նիստը ավարտվեց ժամը 10:35-ին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

_____ Առաքելյան Վահե

_____ Բաղդասարյան Նազիկ

_____ Լարիսա Գալստյան

_____ Դալլաքյան Արման

_____ Ջեյնալյան Մասիս

_____ Ղուլունց Դավիթ

_____ Ղուկասյան Արագած

_____ Միրզոյան Արամ

_____ Շեգունց Ռոմիկ

_____ Սիմոնյան Լորա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ **ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ**

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ՝ _____ **ԱՍՏՂԻԿ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ**